



9. ԽՈՋԱ ՄԱՋՄԱՂ, ԽՈՋԱ ԱԼԻ

Կեղի, չեղի, խոջա Մահմադ անունով մարթըմ կեղի: Խոջա Մահմադի խեր շատ հարուստ կեղի:

Խեր եփ կը մեռի, տղղեն շատ կը շիվարնա: Ինչի՞ց՝ օր ուր կնիկ կանաքջին կը սիրեր:

Յըմեն հիրիկուն, եփ էնու հիրիկ կը քըմեր, կնիկ գյիշեր տաւ կը պաներ, կանաքջին կը գեր, կերթին, կուտեն, խըմեն, էնոնց խամար քեֆ կենեն:

Էտա պատճառով խոջա Մահմադ լըղճորցավ:

Օրըմ խոջա Մահմադ կերթա չարսուի մեջ, ուր խոր ծեռաց մարթ էնու տեսավ:

Ասաց. — Խոջա՛ Մահմադ, քեյ էտա ի՞նչ ա եղեր: Անոթի՞ կը մընաս, ծարա՞վ կը մընաս:

Ասաց. — Ես չեմ գյիտի՝ իմ պատճառն ի՞նչ ա:

Ասաց. — Քու կնիկ մեկ փործա, խի, կարելի կընգընից ա:

Խոջա Մահմադ ասաց. — Ինչի՞ փործեմ, աղա՛:

Ասաց. — Պառկի՛ր հիրիկուն, հինքը սուր քիւն էրա, չում կես գյիշըրին խի՛ ի՞նչ տաւս կը գա:

Խոջա Մահմադ եփ օր եղավ հիրիկուն, հիրիկուն պառկավ, գինքը սուր քիւն էրաց, կնիկն էլ քըմու ուլինգն էթալ էնու ականջ, քիչ մընաց, չըմընաց, տեսավ՝ մեկ տաւ տղփեց:

Կնիկ գըմնաց, տաւ էպաց, էկան ներս:

Խոջա Մահմադ գաղտիկ օր մայեց, տեսավ կանաքջին՝ էփած միս ծեռ: Պերին, կերան, խըմեցին, էլան չոկ էնոնց քեֆով պառկան:

Չու՞մ լիսու ժամանակ կանաքքին էլա՞վ, գլընա՞ց, կնիկ էլա՞վ, չոլխըցա՞վ, էկա՞վ պառկա՞վ հիրկան ծոց:

Առա՛վոտու՞ն խոջա Մահմա՛դ էլա՞վ չարսու՛ի մե՛չ, էնու խոր մարթ էնու ռաստ էկա՞վ:

Ասաց. — Տըղա՛, ի՞նչ տեսար, քու կնիկ փորժեցի՞ր:

Ասաց. — Խա՛, ի՞մ կնիկ փորժեցի:

Ասաց. — Է՛, ինչպե՛ս տեսար:

Խոջա Մահմա՛դ ասաց. — Հիրիկու՞ն օր ես քլընա, ի՞մ կնիկ քլընու ուլինգ էթա՛լ ի՞մ ալանջ, մեկ մարթ մ'էկա՞վ, տա՛ւ տըփեց, գլընա՞ց, տա՛ւ էպա՞ց, օր տեսա կանաքքի մ'էփուկ միս ծեռ: Էկան, էն ու կնիկ կերան, խըմեցին, էնոնց խամար պառկան: Ես ամլա տեսա:

Էտա մարթ ասաց. — Խոջա՛ Մահմա՛դ, էլ մը՛ կանե, գլընա՛ դալալչու մոտ, տու՞ն խան մա՛զաթ:

Խոջա Մահմա՛դ գլընա՞ց դալալչու մոտ, տու՞ն էխան մա՛զաթ:

Խոջա Մահմա՛դի կնիկ գլընա՞ց կասաքջու մոտ, ասաց. —

Տընե՛ր ա՛ռ:

Կանաքքին ասաց. — Տընե՛ր էլի չորս-խինգ խարիր ոսկի, ես փարա չու՞նիմ:

Կնիկ ասաց. — Մեկի՛մ մոտեն փոխ փարա վերցու, տընե՛րն ա՛ռ, ի՞մ հիրկան խոր խորած փարա կա, ես գլինա՞մ:

Կանաքքին գլընա՞ց, ուրիշի մոտեն փարա վերուց, տընե՛ր առա՞վ:

Խոջա Մահմա՛դ էլա՞վ, գլընա՞ց էնու խոր մարթու մոտ:

Ասաց. — Տընե՛ր ծախեցի՞ր:

Ասաց՝ խա:

Ասաց. — Հէսօր գլընա՛, քու կնիկն էլ խա՛ն մա՛զաթ, ծախա՛:

Խոջա Մահմա՛դ գլընա՞ց, կնիկն էլ էխան մա՛զաթ:

Կանաքքին կնիկն էլ առա՞վ:

Մընաց չուր մեկէլ օր, կանաքքին ասաց. — Պալնըսներ թաս-լի՛մ երա:

Խոջա Մահմա՛դ ասաց. — Ձի ապրանքլ կա, քա՛շիմ տա՛ւս, թասլի՛մ էնե՛մ պալնըսներ:

Մընաց չուր հիրիկու՞ն, էնու խոր մարթ էկա՞վ, գա՛ցին, գլիշեր խըզինի տեղ փորեցին, խըզինեն խանեցին:

Առա՛վոտու՞ն պալնըսներ թասլի՛մ երաց կանաքքու՞ն:

Կանաքջին առավ կնիկ, գլընաց տուն, խընդալուց ծըռավ,
օր տըներն էլ, կնիկն էլ առավ, խըզինեն տը խաներ:

Կանաքջին ու կնիկ գացին տուն:

Ասաց. — Կնիկ, քյելա խի խըզինեն դո՞ր ա:

Կնիկ գլընաց, օր խըզինեն խանած-տարած:

Կանաքջին ասաց. — Էսքան փարա ես պարտք էրի, տուն ու
քյեզ գլընեցի, մըկա էսա պարտք ո՞ր տեղից տամ, կնիկ, տաւ ծի
խապեցիր:

Կը կըսկըծորի, ըզկնիկ կը սպանա ու զինքն էլ կը սպանա:

Մենք տանձնանք խոջա Մահմանդի վերեն, խի՝ ի՞նչըխ էլավ
էնու վերծ:

Խոջա Մահմանդ գլընաց էնու խոր մարթու տուն, ասաց. —
Մա՛րթ, տաւ իմ կյանք ազատեցիր ու էսքան փարա էլ իմ ծեռ տը-
վիր, էսօրվա ետ ինչ օր ասես, քու խոսքով տ'ենեն:

Ժամանակ մ'ընցավ, էտա խոր մարթ ասաց. — Խոջա՛
Մահմանդ, արի՛ քյե փըսակենք, անկնիկ չըս կանա մընա:

Խոջա Մահմանդ ասաց. — Տաւ գինաս, կը փըսակես, փըսա-
կա, ես քու խոսքեն տաւս չըմ էլնի:

Ասաց. — Ախչիկըմ կընդի, պերեն փըսակեն վըր քյե:

Խոջա Մահմանդ ասաց. — Ես չեմ խառվի, տաւ կընդի՛, տաւ
պե՛ փըսակա՛:

Մարթն ասաց. — Խոջա՛ Մահմանդ, ծի ախչիկըմ կա, պերեն
փըսակեն քու վերեն, լե համա՛ էնու ծեռըմ շալ ա, էնու ոտ մ' էլ
թալ ա, էնու աչք մ' էլ կոր ա: Եթե կուզես, պերեն փըսակեն քու
վերեն:

Խոջա Մահմանդ ուր մտքի մեչ էաց. «Էն կնիկ, օր շալ ա,
թալ ա, կոր ա, ես առնեմ, ի՞նչ էնեն»:

Վերծ ասաց. «Վոլլա՛, տ'առնեմ, թըխ ինչ կեղի, եղի: Էսա
մարթ ծի շատ աղեկութեն էրե, պարտաստուկըմ պըռնենք իհանեմ,
թող աշխատի»:

Խոջա Մահմանդ ասաց. — Ես քու ախչիկ տ'առնեմ, ի՞նչ կէլնի,
թ' էլնի:

Մարթն ասաց. — Խոջա՛ Մահմանդ, գլընա՛ սենյակ, ախչիկ
տե՛ս, ես ճամխեմ, մալեն պերեն, քու մահր էնեն:

Խոջա Մահմանդ էլավ, գլընաց ախչըկե հօդեն, տեսավ գի մեյ
խորոտ ախչիկըմ հօդի մեչ, խելքից, մտքից էլավ:

Ասաց. — Տո՛ւ վի՞ր ախչիկն ես:

Ասաց. — Քո՛ւ խոր մարթու ախչիկն եմ:

Ասաց. — Ջա՛նըմ, քի խեր կասեր՝ ախչըկե ծեռըմ շալ ա, ոտըմ թալ ա, աչքըմ կոր ա, կարելի տո՛ւ էնի՞ չես:

Ասաց. — Ես էն եմ, վով օր էկե ծի ուզե, հըմենին էսպես խապեր ա, թու մարթ չասե՛ խա, ես տ'առնիմ, օր տանեն ծի երկան:

Խոջա Մահմա՛դ ուրախցավ, էլա՛վ, գընա՛ց ախչըկե խոր մոտ:

Ասաց. — Ես շատ շնորհակալ եմ քյեզնից: Քյելի՛, մալե՛մ պե՛, մեր մա՛հր թ' էմա:

Մարթն գընա՛ց, մալե՛մ էպի, էնոնց մա՛հր էրաց: Երկու-իրիքյ օր մ'էլ էնու խաղտուն էրաց:

Ախչիկ, լաճ գա՛ցին, մեկ սենյակի մեչ ապըրվան:

Շատ մընաց, քիչ մընաց, օր մ'ախչիկ ասաց. — Խոջա՛ Մահմա՛դ, մենքյ նստելով, ուտելով, քանի՛մ տարուց էսա փարեն տը խըլըսցուցենքյ:

Խոջա Մահմա՛դ ասաց. — Կնի՛կ, ապա ի՞նչ էնենքյ:

Ասաց. — Հիսուն խատ ծիրի ա՛ռ, հիսուն պեռ էլ Հալաբա՛ մալ ա՛ռ: Էղի բազըրգա՛ն, տա՛ր էմա օտար քաղքըրներ ծախա՛, մեր փարեն թոխ հա՛վիլնա, օր ապրվենքյ:

Խոջա Մահմա՛դ ասաց. — Շա՛տ աղեկ, թող քի խոսքով եղի:

Գընաց, առավ հիսուն խատ ծիրի, հիսուն պեռ էլ Հալաբա՛ մալ, էպի էպա՛րց, տաս խատ կաթըրջի էլ պըռնեց խըն ծիրիքյներուն, ինքյն էղավ բազըրգա՛ն, խեծավ ծին ու առեց ուր մալեր, գընա՛ց:

Շատ գընա՛ց, քիչ գընա՛ց, շա՛տ ու քիչ Աստվաժ գյինա, մեկ քաղքյի՛մ հանեճ էթալ:

Տեսավ, օր էտա քաղաքյ ջըհուտներու քաղաքյն էր: Տեսավ, օր երկու խոգյի քաղքյից էկան:

Խառցնեցին կաթըրջոց, ասին. — Ծեր բազըրգա՛նբաշին վո՞ն ա:

Ասին՝ խոջա Մահմա՛դն ա:

Գա՛ցին խոջա Մահմա՛դի մոտ:

Ասին. — Տո՛ւ ես խոջա Մահմա՛դ:

Ասաց՝ խա՛:

Ջրհուտներ ասին. — Քու մալի մեչ յափմա կըրմըզ չըկա՞,
մեր թակավոր մեկ թակ յափմա կըրմըզ կուգա:

Ասաց. — Չէ՛, իմ մալ հըմեն Գալաթա մալ ա:

Ջրհուտներ ասին. — Եթե կըրմըզ էղավ քու մալի մեչ, քու
հիսուն ճարին, հիսուն պեռ մալ տը խասի միրուն: Թե չէղավ, հի-
սուն ճարի, հիսուն պեռ մալ մենք պիտի տանք քե:

Ասաց. — Շա՛տ աղեկ:

Պերեն սանաթըմ շինեցին: Իմզա էրեցին:

Ջրհուտներ ասին. — Դե՛, թի մընա չուր առավոտուն, գանք,
քու պեռներ աչկենք:

Մընաց չուր գյիշեր: Գյիշեր ջրհուտներ թակըմ յափմա կըր-
մըզ պերին, տըրին էնու մալի մեչ, թակըմ էնու մալից գողցան,
տարան:

Մընաց չուր խըլիսուն: Խըլիսուն էկան, օխլամա էրին, օր
թակըմ յափմա կըրմըզ գի էնու մալերու մեչ տեսան:

Խոջա Մահմադ ասաց. — Ջանըմ, իմ պեռներու մեչ յափմա
կըրմըզ չըկեր, հըմեն Գալաթա մալ էր, էսի ո՞ր տեղեն էլավ:

Ջրհուտներ ասին. — Ախըր գի կընդանք:

Էտա հիսուն ճարին, հիսուն պեռ մալն պանջին, առան,
գանցին:

Խոջա Մահմադ շիվարավ, մընաց: Նա՛ կանա ետ տաննա,
նա՛ հանձն էրթա, չըգյինա՝ ի՞նչ էնա:

Կաթըրջիք էնու մոտեն էնոնց ամսականեր կուգեն: Ինչ օր
փարա կեր մոտ, էտու կաթըրջոց ամսականեր, էնի գյընաց ջրհու-
տի քանդի մեչ: Փարեն խըլըսավ, մընաց անոթի:

Ասաց. — Տաննամ էրթամ ե՛տ, իմ կնիկ ծի տ'ասա՝ տու մարթ
չես, օր ամբողջ մալ փըճըցուցիր, տանջար էկար: Մընամ էստա,
մեռնեմ էլ, չըմ էրթա, էտ ամոթ չըմ պերի իմ էրես:

Մընաց օր մ' էրկու անոթի:

Ասաց. — Տ'երթամ տեղըմ ծառաութուն էնեմ, չէ, կը մընամ
անոթի:

Ծառաութուն ծեռ չինգավ, գյընաց, էղավ տանրայինի ծառա:
Քյոմուռ կը պերեր, կը թակեր կրակի մեչ: Տարի մ' էրկու մընաց,
խեղճ, շիվար էղավ՝ կեղտո՛տ, ջըլեր կըտըրտված: Էնպես կը ծա-
ռայեր՝ խացափորիկ:

Տարի՛մ ընցավ, էրկըսվին՝ Խոջա Մահմադի կնիկ ասաց. —

Դանդա՛, էսա մարթ էսա երկու տարի եղավ՝ չէկավ: Չեղի՞ պանձ՝ ա պատահե:

Խեր ասաց. — Ձավա՛կս, ես չըմ գլխի, ես ի՞նչ գլխամ:

Ասաց. — Դանդա՛, ծի հիսուն ճարի, հիսուն պեռ մալ առ, ես երթամ, աշխարք կան գան, խի իմ մարթ չըմ կընդի, խի էնոր ի՞նչ ա պատահե:

Խեր էլավ, հիսուն ճարի առավ, հիսուն պեռ էլ Դանդա՛ մալ, տաս խատ էլ կաթըրջի էպի:

Կնիկ էլավ, էնու խալվըներ փոխեց, մարթու խալավ խագավ. եղավ էմա՛լ խորոտ ջըհելըմ, օր մարթ տեսներ, խելքից, մըտքից կէլներ:

Քըշեց, գըրնաց: Աշխարք կան էկավ, օր մեկ քաղաք օր էնու մալ կառնին, չըծախե:

Ավուր մեկ էկավ, պատահավ էտա ջըհուտի քաղքի: Տեսավ, օր քաղքից երկու ջըհուտ էկան:

Կաթըրջոց ասին. — Ծեր բազըրգանբաշին վո՞ն ա:

Ասին. — Խոջա Ալին ա:

Կնիկ էնու անուն տըրի խոջա Ալի:

Գանցին խոջա Ալու մոտ:

Ասին. — Խոջա՛ Ալի, յափմա կըրմըզ չըկա՞ քու մալի մեչ, թակըմ մեր թակավոր կուզա:

Խոջա Ալին ասաց. — Չէ՛, իմ մալ հըմեն Դանդա՛ մալ ա, կըրմըզ չունեն:

Ջըհուտներ ասին. — Եթե եղավ, քու մալ հըմեն կեղի միրի:

Ասաց. — Շա՛տ լավ:

Ասին. — Թե չեղավ, քու մալի, ճարու չափին քե մալ կը տանք:

Անանթ շինեցին, օր մըներ չու՛մ առավոտուն, գլեն, թակեր հըմեն մույանա էնեն:

Խոջա Ալին ասաց. — Վոլլա՛, իմ հիրկան զանջան էսա դուց ա: Ես էսա քաղաք տը կան գան, բալկո կընդիմ իմ հիրիկ:

Մընաց չուր հիրիկուն, հիրիկուն խոջա Ալի կանչեց կաթըրջոց, էպե, ասաց. — Տե՛, կաթըրջի՛ք, տու մեկ օր քըրնաք, ծեր խոգլին կառնեմ, պառկե՛ք, լե հիշար մընացեք:

Ասաց. — Ինչ օր պերեն, ինչ կը տանեն՝ ծեն մ՝ էնե՛ք, եփ օր էնոնք էրթան, նոր ծի հիշարցուցե՛ք:

Կաթըրջիք պառկան, հիշար մընացին, տեսան, օր ջըհուտ-
ներ թակըմ պերին, թակեցին էնոնց մալերու մեչ, թակըմ գաղցան,
տարան:

Ջըհուտներ գացին: Էնոնք գացին, խոջա Ալուն խանեցին
վեր:

Ասին. — Ելի՛, ելի՛, թակըմ կըրմըզ պերին, թակին մեր մալե-
րու մեչ, թակըմ գաղցան մեր մալերուց, առան, գացին:

Խոջա Ալին էլավ, թակ էպաց, օր կըրմըզ էր:

Ասաց. — Հա՛, վոլլա՛, էտոնք են իմ հիրկան գաճաճ տված,
էտոնք են իմ հիրկան ինչ էրած՝ էրած:

Կանչեց կաթըրջոց, հըմեն էկան:

Ասաց. — Դե՛, գյետին փորե՛ք, էսա կըրմըզ լըցե՛ք հինե,
խորե՛ք ու խող ու ծիու կու տըվեք վերեն, ծիյանք կապե՛ք վե-
րեն, հաճ տըվե՛ք, թըխ ուտեն:

Էնոնք գյետին փորեցին, կըրմըզ լըցին մեչ, խող ու կու
տըվին վերեն, հաճ լըցին, ծիյանք թողին վերեն:

Խոջա Ալի ասաց. — Մեր թակեր հըմեն քակե՛ք, մեկ-մեկ
թոփ խանե՛ք, ըրե՛ք էսա պեռան թակ:

Կաթըրջիք էնոր ասածի պես էրին, էղավ խարիր թակ:

Չուր խըլխուլն՝ ջըհուտներ էկան, աչկեցին, կըրմըզ չըկըմ-
դան:

Կը խամբրե՛ն, թակեր թամամ խարիր ա, ու կըրմըզ չըկա
մեչ:

Չըգյիցան, թե ի՞նչըխ էղավ:

Խոջա Ալին ասաց. — Դե՛, քյեւե՛ք, իմ հիսուն պեռ Հալաճա
մալ ու հիսուն ճիրիք տըվե՛ք:

Գյընաց, ուր սանաթ տարավ, էնու հիրկընից տարած մալ
տըվեցին էնու, առեց էպե:

Էտու ջըհուտի քաղքի մեչ մեկ դաւքան էպաց: Էտա մալեր
հըմեն էտի խանութի մեչ:

Էտա քաղքի մեչ որ թոփ կը ծախեր քսան կուռուշ, հինք կը
տեր տաս կուռուշ: Էն ապրանք օր կը տեն տաս, ինք կը տեր
խինգ կուռուշ:

Քաղքի մեչի խանութներ հըմեն կոծվան, ժողովուրթ տառ-
ցած վըր էնու՝ բազառ կանա:

Թաւըրներ գացին, թակավրուն փողոքեցին, ասին. — Էտա

մարթ էսա դիւց չըմըլեն տիւս, մենքյ անոթի, ծարավ տը մեռինքյ, առուտուր հըմեն տանցե էնու վերեն:

Թակավոր գէնի կանչեց, տարավ:

Ասաց. — Խոջա՛ Ալի, թուջըրներ էկած իմ մոտ գանգանտ, կասեն՝ տիւ շատ հեծան մալ կը տաս:

Ասաց. — Թակավոր, տիւ չը՛ս ուզի՝ քիւ քաղքի մեչ հեծնութեն էղի: Օր չըս ուզեր՝ ես իմ խանութ կը կոծեմ, էսա դիւց կը պաննամ, կերթամ:

Ասաց. — Չէ՛, քիւ գործ շարունակի:

Խոջա Ալի տանցավ, էկավ էնու խանութի մեչ մստավ, մտածեց, ասաց. — Ջա՛նըմ, ես էկեր եմ իմ հիրկան էտե, էսա ի՞նչ առուտուր ա կենեմ:

Էլնվ, գյընաց քաղքի մեչ զըվոեց, չըկարցավ կընդեր:

Մընաց չուր մեկէլ օր, գյընաց տարալընոցներ աչկեց, տեսավ մեկ մարթըմ քյոմուռ շալակ, էն տեղեն կը գյեր:

Ճանչըցավ, օր էնու հիրիկն էր:

Ասաց. — Մա՛րթ, տիւ ո՞ր տեղացի ես:

Մարթն ասաց. — Ես էնա՛ հաւրուշ երկրացի եմ:

Խոջա Ալին ասաց. — Քիւ անուն ի՞նչ ա:

Ասաց. — Իմ անուն խոջա Մահմանդ ա:

Ասաց. — Խոջա՛ Մահմանդ, ըսկի կնիկ, տըղա, պա՛մ չունի՞ս քիւ խոր երկիր:

Ա՛խըմ քաշեց խոջա Մահմանդ:

Խոջա Ալին ասաց. — Ընչի՞ ախ կը քաշես:

Ասաց. — Ա՛խ կը քաշեմ, օր ծի կնիկըմ կեր, էնքան խորոտ էր, օր մարթ տեսներ, խելքից, մըտքից կէլներ: Ես էկա բազըրգանութեն, էսա քաղքի ջըհուտներ ծի խապեցին, իմ մալ իմ ծեռնեն առան: Էլ ես չըկարցա էրթեր խըն տուն: Ասի էրթամ, իմ կնիկ վըր ծի տը քյըռխի, օր մալեր տարա, փըճացուցի: Ես էլ էսա քաղաքյ մընացի, իմ չարեն կըտրավ, էկա, էղա ըստա տարալընի ծառա, քյոմուռ կը կրեմ:

Խոջա Ալին ասաց. — Մահմանդ, ծի կը ճանչընա՞ս:

Ասաց. — Չէ՛, քյե չըմ ճանչընա:

Ասաց. — Ես խոջա Ալին եմ, օր էսա տեղ դաւքան եմ պանցե:

Ասաց. — Հա՛, էսա տեղ կասեն, թե խոջա Ալին դաւքան ա պանցե, առուտուր հըմեն տատըրցուցե, էնի տա՛ւն ես: Ձի տար,

երա քյե ծառա, էսա քյոմուռի թողից, մըրից ազատիմ:

Ասաց. — Շա՛տ աղեկ, քյե կը տամեն, խի քյե ամիս ի՞նչ տամ:

Ասաց. — Ես ըստա՛ խացափորիկ կաշխատեմ, դիրսվան տալ՝ քիւ նըսաֆ, ի՛նչ կը տաս՝ տու:

Խոջա Ալին ասաց. — Եփ օր էմալ կասես, ես քյե ամիս խինգ ոսկի կը տամ, քիւ խալվըներն էլ կը փոխեմ, իմ ծոցեն էլ կուտես, կը խըմես, բալկո քիչըմ փարա շինես, էրթաս երկիր՝ մըտ քիւ կնիկ, օր կասես՝ իմ կնիկ շատ խորոտ ա:

Առավ հիրկան, գյընաց պանդիս, լավ կանոնավոր դաստըմ շոր էպե, խագիւց, գանցին դաւքան, ըսկսեցին առուտուր էնել:

Համա՝ խոջա Մանհանդ չըճանչընար, թի խոջա Ալին էնու կնիկն ա: Գի ծառաութուն կէնա: Աստըծուն էլ շնորհակալ կէղի, թե քյոմուռի հալից էլավ, խանգիստ գործըմ կընդի, փարա կը վաւտըկա:

Ժամանակըմ ընցավ, ապրանքյ առնողներ ջըհիւտի թակավորի ախշըկեն կը պատմեն, օր խոջա Ալին էնպես կանոնավոր մարթ մ՝ ա, օր մարթ տեսի, մարթիւ խելքյ գյըլխուց կէրթա:

Թակավորի ախշիկ կուզա՝ էնի պերա էնու սենյակի մեջ:

Էնու հառճըվու մարթուն կասա. — Էլի՛, գյընա՛, խոջա Ալուն ասա՛՝ թը ծի թոփըմ շամի պերա: Օր տա, տալ չըպերես: Ասա՛՝ թակավորի ախշիկ կասա՛՝ թող ինքյ ուր ծեռնով առի՛, գա՛:

Հառճըվու մարթ գյընաց խոջա Ալու մոտ:

Ասաց. — Խոջա՛ Ալի, թակավորի ախշիկ քյենե թոփըմ շամի կուզա:

Ասաց. — Առ՛, գյընա՛:

Ասաց. — Չէ՛, կասա՛՝ թ՝ էնի պըխտ պերա:

Ասաց. — Տալ գյընա՛, մեկ քիչ վերճ ես կը պիրեմ:

Էն մարթ գյընաց:

Թակավորի ախշիկ ասաց. — Ի՞նչ էրիր:

Ասաց. — Կասեր՝ տալ գյընա՛, ես քիչ վերճ կառեմ, կը գամ:

Թակավորի ախշիկ ուրախացավ:

Խոջա Ալին մտածեց, ասաց. «Ըստեղ պա՛մ կա, օր ծի կը կանչա: Շամին էղեր՝ շամին կառեր, կէրթեր»:

Ասաց. — Խոջա՛ Մանհանդ, էլի՛, թոփըմ շամի ա՛ռ, գյընա՛՝ թակավորի ախշըկեն: Օր քյե խառցընա, թե քիւ անուն ի՞նչ ա, ասա՛՝ իմ անուն խոջա Ալի ա:

Խոջա Ալին ինչ մտածեց, ասաց. «Ես էրթամ թակավորի ախշըկե մոտ, վա՛յ թե էնու միտք շու՛ն ա, ես կնիկ եմ, էնի կնիկ ա, անպատիվ կեղնիմք: Լավ ա, օր ես խոջա Մահմանդ ճամխեմ, օր էնի մարթ, էնու ծեռնեն գալած թոխ ի՞նչ կենա, ք՛ էնա»:

Խոջա Մահմանդն էլ մեկ սիրուն, խորոտ մարթ մ՛ էր:

Ասաց. — Խոջա՛ Մահմանդ, ա՛ռ թոփըմ շամի, գյընա՛ թակավորի ախշըկեն, տար տառ կանիիր, տառ պա՛ց, տու՛ ներս, արի՛: Չէ՛ որ քյե ներս առան, քյեզնե ինչ օր կը գա՛ չըխնայես, ես ըստա եմ, չըվախենաս:

Խոջա Մահմանդ առավ թոփըմ շամի, գյընաց թակավորի ախշըկե մոտ, տառ կանա՛վ, կանչեց:

Ասաց. — Թակավորի ախշըկեն ասե՛քյ, թող գա՛, էնու շամին տանի:

Հառճըվու մարթ էկավ ասաց. — Թակավորի ախշիկ կասա՛ թըխ առի, գա՛ ըստն:

Ասաց. — Չէ՛, ես չըմ կենա գա՛, դուքան մընացեր ա մըշամուր, մուշթերի շատ կա:

Թակավորի ախշիկ էկավ տառ, ասաց. — Տո՛ւն ես խոջա Ալի:

Խոջա Մահմանդ ասաց. — Խա՛, եսն եմ:

Ասաց. — Արի՛ ներս:

Ասաց. — Չէ՛, դուքան մըշամուր ա, չըմ կանա գա՛:

Թալեց ծեռ, զոռով քաշեց ներս: Տարավ ուր սենյակի մեջ:

Ասաց. — Խոջա՛ Ալի, ես քու շամուն փափաք չեմ, ես քյե յեմ փափաք:

Ի՛նչըխ օր ախշըկե քյեֆ ուզեց, էնպես էրին:

Ջըհիստներ իմցան, օր թե խոջա Ալին էկե, գացե ախշըկե սենյակ, գացին, շոտըմ լուր տըվին թակավորին, ասին. — Մենքյ քյե ասիմքյ՝ էսա մարթ երկրից տառ խան, տառ չըխանիր: Մըկա դիր էկե, քու մամուսին տիպե:

Հիրիկվան տեղն էր:

Թակավոր ասաց. — Գացե՛քյ, ախշըկե սարեն չորս պալիւր կանե՛քյ, կարակոլ՛ պահեքյ չու՛մ առավոտուն, գանքյ խուզարկենքյ, խոջա Ալին խանենքյ տառ, կախաղան խանենքյ:

Ծեն գյընաց քաղքի մեջ, օր խոջա Ալին գացեր ա թակավորի ախշըկե մոտ: Ախշըկե սարի չորս պալիւր պըռմած ան, վաղ

տը պոնեն, խանեն կախաղան:

Խոջա Ալին հիմցավ, թե հիրիկ մընացեր ա մեջ:

Ասաց. — Ի՞նչ էնեմ, էտա մարթ ազատեմ:

Գլընաց, խինգ խատ խու առավ, տաս կիտր արաղ առավ, էտա խույեր տարավ կարմըրցուց, առավ, արաղի խետ տարավ թակավորի ախչըկե սարի մոտ:

Ուր խալվըներ փոխեր ա, ջըհիւտի խալավ խագյեր ա, ոչ մեկ մարթ չըճանչընա:

Տարավ ջըհիւտներուն, ասաց. — Առե՛ք էնա միս ու արաղ, կերե՛ք, խըմե՛ք, ծե ուրախութե՛ն էրեք: Օր էտա մարթ էսա քաղաք քակեց, մեր առուտուր տնտրեցուց:

Ջըհիւտներ օր միս, արաղ ըխան, ուրախութեն խելքից էլան: Կերան միս, արաղ խըմեցին:

Չըմեն սարխոշցան, չուր կես գիշըրին պառկան, քըլնան:

Եփ օր էնոնք պառկան, քըլնան, խոջա Ալին էլավ, գլընաց շոտըմ տուտ տըփեց:

Խըն տուտ տըփելուն, հիրիկ էկավ տըռան վերեն:

Ասաց. — Տուտ պաց, արի՛ տուտ, էնոնք իըմեն խելքից էլած են:

Տուտ էպաց, էկավ տուտ, ոչ մեկ մարթ չիմցավ: Էկան, գացին էնոնց խանութի մեջ պառկան, քըլնան: Եփ օր լուսցավ, թակավոր ուր վոզիրներով էկան, գացին ախչըկե տուն օխլամա էնեն:

Գացին, ախչըկե տուն մարթ չըտեսան:

Թակավոր ախչըկեն ասաց. — Ախչի՛կ, չէ՞ կասեն խոջա Ալին էկի ըստա՝ քու մոտ:

Ասաց. — Չէ՛, դադա՛, սուք կասեն, հո՞ւր ա:

Թակավոր, վոզիր էլան, գացին խոջա Ալու դուքան, կը տեսնին, օր խոջա Ալին գի էտա տեղ նստեր ա:

Թակավոր ասաց. — Խոջա՛ Ալի, վըր քե էսպես պա մ'ասին, աչկեցինք, սուք էր:

Խոջա Ալին ասաց. — Թակավոր՝ ապրած, օր տուտ նամուսով թակավոր մ'էղիս, օր էտա ջըհիւտներ քու նամուսին տիպան, պետք ա տուտ էնոնք իըմեն քաշես սուր:

Թակավոր ուր վոզիրին ասաց. — Վոզիր, օղորթ էսա մարթու խոսքն ա: Պետք ա մենք էտոնք քաշենք սուր:

Վոզիրն ասաց. — Քու կամքն ա:

Խըլիսուն էտա ջըհուտներ քաշեցին սուր:

Խոջա Ալին ասաց. — Վոլլա՛, ես իմ հիրկան ոխ վերուցի:

Ժանանակ մ' էնտեղ մընացին, կնիկ չոկ կը պառկեր, խոջա Մահմանդ չոկ կը պառկեր:

Օրըմ կնիկ ասաց. — Խոջա՛ Մահմանդ, տու չը՞ս իզն իմ կըշտի խետ պառկի:

Ասաց. — Ամա՛ն, խոջա՛ Ալի, ես քու ծառեն՝ ի՞նչըխ գնմ քու յաթըղներու մեջ պառկիմ:

Ասաց. — Չէ՛, տը գնս:

Ինքյն էլ չըզընաց:

Ասաց. — Օր չես իզն պառկի, արի՛ մե քիչ իմ քանակ, իմ օտքյեր մաժե՛, գյընա՛ քու տեղ պառկի:

Ինքյն ծառա յեր, էլնվ, գյընաց, խոջա Ալու օտքեր մաժեց, օր հըմեն օտաց մեկ հատ խալխալ կապուկ էր, զինքյ-զինքյ մտածեց, ասաց. «Էսա մեր երկրի կիխտեր էսա խալխալ կը կապեն, էսա ի՞նչըխ ա՛ խոջա Ալին էլ ա կապեն»:

Դիր քանակն էլ մաժեց, սիրտ մաժեց, տեսավ, օր հըմեն մեկ ծիծ էսքան:

Էսպես շիվարած կաննվ:

Խոջա Ալին ասաց. — Խոջա՛ Մահմանդ, տու ընչի՞ շիվարած կաններ ես, մաժա՛:

Ասաց. — Խոջա՛ Ալի, քյե ծիծ կա, ես մարթու ծիծ չըտեսեր եմ:

Խոջա Ալին ասաց. — Մե ցեղական էնպես ա, մարթու էլ, կընգան էլ ծիծ կա:

Խոջա Մահմանդ ասաց. — Ես թու մարթու ծիծ չըմ տեսի:

Խոջա՛ Ալին ասաց. — Խոջա՛ Մահմանդ, արի՛ իմ Աստըծուն երկըրպագությունն արա, ես քու կնիկն եմ, ծի չըճանչընա՞ս, օր էկա, քյե էսա մեղ տեղեն ազատեցի:

Խոջա Մահմանդ ուրախութեն սկսեց լաց:

Ասաց. — Ինչի՞ կը լնս, քու ապրանքյների հըմեն առա, քյե ազատեցի, քու մըրագին խասար: Էլ ինչի՞ կը լնս:

Ասաց. — Էնոր խամար կը լնմ, օր տու կնիկ մ' ես, ես մարթ, ես չըկարցա քյե չափ գործ հառաճ տանեմ, իմ խելք քու խելքի պես չէլնվ:

Կնիկ տանջավ, ասաց. — Խոջա՛ Մանմանդ, փորժանքյ ա,
մարթ կընգի մեչ: Մինչև մախվան օր ես թու մարթիւ չըմ ասի, թե
ես գացի, հիրիկս ազատեցի պերի, օր տոււ ամչընաս:

Էնոնց խամար պառկան, քյեֆ էրին:

Մընացին էն տեղ մեկ ժամանակըմ, էնոնց ապրանքյներ
սաղացուցին, էլան, էնդիւց պանջին, գացին խընդ խոր երկիր:

Խեր տեսավ, օր ախչիկ ու հիրիկ խընդորաց էկան:

Խեր գյընաց հանճաներ, էպե, հիրարու վերեն ուրախացան:

Ախչըկեն խառցուց, ասաց. — Ախչի՛կ, քիւ էրիկ ո՞ր տեղն էր:

Ասաց. — Դանդի՛, իմ էրիկ մեծ առուտուրըմ պըռներ էր, գի
գացի առա, էկա:

Էնոնքյ խասան ուրենց մըրագին ու ապըրվան մեկ տեղ:

